ԼԵՌՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՊՈԵԶԻԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ («Հայդուկի երգեր»)

19-րդ դարավերջին հայ ազգային-ազատագրական շարժումն աննախադեպ վերելք ապրեց: Մի կողմից թուրքական բռնակալության անտանելի ճնշումները, մյուս կողմից հայ հասարակական մտքի ներքին խմորումները ստեղծեցին այն քաղաքական հենակետը, ուր վեր բարձրացավ ազատության դրոշը:

Այդ մեծ, հերոսական պայքարում հայ երգը աննախադեպ մոտ կանգնեց հայ ազատամարտիկին, ինքն էլ դառնալով մի աննահանջ պայքարող ի դեմս Ավետիք Իսահակյանի:

Մինչ այդ, թեև Ալիշանի, Պեշիկթաշլյանի, Պատկանյանի կողմից հնչեցվում է զինված պայքարի միջոցով ազատության, անկախության հասնելու գաղափարը, սակայն Իսահակյանի մոտ այն ավելի խորն ու ընդգրկուն դրսևորվեց՝ իր մեջ արտացոլելով ժամանակաշրջանի ողջ էությունն ու հայ մարդու ներքին հակումներն ու տվայտանքները:

Ազգային-ազատագրական շարժմանը նվիրված բանաստեղծությունների շարքը «Հայդուկի երգերից» վերնագրով ինքնին հերոսացման, տառապանքի, ընդվզման աննախադեպ մի ասք է, ուր իրականությունն ասես միաձուլվում է անիրականին, ուր հայրենիքի հանդեպ սերը դառնում է պաշտամունք:

Այն, որ «Հայդուկի երգերից» անվանումը կրող բանաստեղծությունները մեծ ընդունելություն գտան «Վերնատան» անդամների կողմից, աներկբա հաստատումն է, որ շարքը հայ գրականության մեջ մեծ նորություն է: Շարքը սկսվեց ձևավորվել 1896թ-ից, երբ հայ ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց նոր, հերոսական փուլ, երբ հայ ժողովրդի քաջարի զավակները փորձեցին իրենց անձնազոհության, հաղթական զենքի միջոցով հասնել ազատության, բռնակալության տապալման, և այդ շարժման առաջնորդները հանդիսացան հայ ֆիդայիները կամ հայդուկները: «Մինչդեռ այդ տասնամյակում էր, որ նոր ու գերադրական աստիճանի բարձրացավ հայ ազատագրական, համազգային շարժման գաղափարաբանությունը, սերտացավ կապերը Հայաստանի զույգ հատվածների միջև, իրար մերձենալով, գիրկընդխառն պայքարի մարտադաշտ իջան հայաշխարհն ու գաղթաշխարհը, ամենուրեք սկսեցին թևածել Հայոց ազատ, անկախ, միասնական պետականության վերընձյուղման կոչերը, որոնք քայլ առ քայլ բյուրեղանալով, ապա գործողությունների ծրագրերի կերպարանք ստացան»[1]:

Հայդուկ-ֆիդայիները, ազգային-ազատագրական պայքարը հանելով և քաղաքական, և ռազմավարական նոր փուլ, ժողովրդի համար դարձան

ազնվության, վեհության, ազատության խորհրդանիշ, որը մինչ այժմ չի կորցրել իր գաղափարական նշանակությունը:

Ֆիդայական շարժումը սկիզբ առավ 19-րդ դարի 80-ական թվականներից՝ հետզհետե ավելի տարածվելով Արևմտյան Հայաստանում: «Ֆիդայական շարժման նախաքայլերը վերաբերվում են 1880-1882 թվականներին: Սկսվելով Տարոնում, շարժումը գնալով տարածվեց Վասպուրականում, իսկ որոշ ժամանակ անց ընդգրկեց ամբողջ Արևմտահայաստանը»[2]:

«Հայդուկը,-գրել է Ռաֆֆին,- բնական արտահայտությունն է բռնակալության լծի տակ ճնշված, հարստահարությունից տանջված ու յուր մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի կյանքի: Հայդուկը ստրուկի բողոքն է իշխող բարբարոսության դեմ»[3]:

Ամենուր ստեղծվում էին ֆիդայական խմբեր, որոնց պաշտում, ոգևորում էր հայ ժողովուրդը, որպես իր պաշտպանի, իր վրիժառուի:

«Հայրենիքը ազատագրության համար սրբազան կռվում ֆիդային շատ բանից էր իր անձը զրկում: Նա չուներ անձնական կյանք, տուն ու տեղ: Թողնելով իր տաքուկ օջախը, նա բարձրանում էր լեռները, տարիներով կտրված աշխարհից ու կյանքից: Ֆիդային նույնիսկ հրաժարվում էր ամուսնանալ, գտնելով, որ դա կարող է խանգարել իր գործին: Նա խոր համոզում ուներ, որ այն, ինչ կարող է խանգարել հայոց ազատագրական շարժմանը, պետք է մերժվի: Ֆիդային ժողովրդին նվիրաբերվել էր կամովին, անմնացորդ, առանց փառք կամ անմահություն ակնկալելու»[4]:

Բնականաբար, ժողովուրդը իր բանահյուսության մեջ բազում երգեր, ասքեր նվիրեց հայ ազատամարտիկ ֆիդայուն: Նրան հիշեց, գովերգեց, փառաբանեց: Ժողովրդի համար հայ ֆիդային դարձավ այն անձնավորությունը, որը իր բարոյական հատկանիշներով, անձնական առանձնահատկություններով պիտի բերեր փրկության լույս, պիտի ոչնչացներ չարին, հովանավորը դառնար անուժին ու խեղճին: Արաբոյին է նվիրված հետևյալ երգը.

Դեն էրիշկէ գալողն ո՞րն է,
Քաջ Արաբո բախտավորն է,
Կարմիր իրիցանց զինուորն է,
Զարթի՛ր, լա՜ո, մըռնի՛մ քըզի[5]:

«Արևմտահայ գյուղացիները, ի դեմս հայդուկների տեսնելով իրենց պաշտպաններին, ամենուրեք խոր համակրանք էին տածում նրանց հանդեպ, թաքցնում թշնամիներից, ապաստան տալիս, օգնում կռիվների ժամանակ, բուժում ստացած վերքերը, բավարարում հագուստով և սննդամթերքով»[6]: Գյուղացիները հայդուկին փառաբանում էին երգերով.

Ա՜խ ֆետայիներ, ջա՛ն ֆետայիներ,
Ձեր մայրերը ձեզ ղուրպան,
Մշո Սուլթան սուրբ Կարապետ
Ձեզի լինի օգնական[7]:

Հայրենիքն ազատ տեսնելու հույսով հայ մարդը ձգտում է իր զավակին դաստիարակել հայդուկի ոգով՝ քաջ ու անձնազոհ.

Թողի՛ր դաշտը, արոր ու մաճ,
Իմ միևնուճար, ազիզ լաճ,
Մի քիր խաղա մոսիկի հետ
Որ էլ չըլլանք քյուրտի խարճ[8]:

Հայդուկին սիրում, պաշտում էին ոչ միայն հայերը, այլև քրդերը՝ ելևեջով նրանց ազնիվ, արդար վերաբերմունքից.

Քաֆըր է այն մարդ,
Որ ուզենա Սերոբ փաշան սպանել:
Կրոն ալ ունի նա, հավատ ալ.
Այդպիսի տղա մեր մեջ իսկի չկա,
Ափսոս, որ նա ֆըլա է[9]:

Կամ թշնամին անգամ զարմանում է հայդուկի մեծահոգությունից:

-Եամա՜ն, Աստուած, ֆետան եկավ, ո՞ւր փախչինք,-
Ասաց որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրտուհին,
-Մի՛ վախնար, հանգիստ կեցի՛ր, բաջի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆետան:

Հայդուկին նվիրված երգեր ունեն նաև հունգարացիները, բուլղարացիները, սերբերը: Այս փաստը հաստատում է, որ հայդուկը, ով ազատության դրոշն է բարձրացրել, միշտ էլ սիրվել, պաշտվել է իր ժողովրդի կողմից:

Իսահակյանի «Հայդուկի երգերից» շարքի առանցքը հայ ֆիդային է: Իսահակյանի հայդուկը իր մեջ մարմնավորում է հայ ազգի գերագույն հատկանիշները արիությունը, քաջությունը, բարեխղճությունը, գաղափարին նվիրվածությունը:

«Հայդուկի երգերից» շարքի հեղինակը՝ Հայ գուսանը, որը Իսահակյանն է, կարողացավ ըմբռնել ժամանակի ոգին, շնչել ժամանակի շնչով և ժամանակաշրջանի հերոսապատումը նկարագրել գեղարվեստական ուժով: «Նա,- գրում է Նիկոլ Աղբալյանը,- կարողանում է ժողովրդի պես զգալ, նրա սրտով ապրել: Իսկ ի՞նչ է նշանակում ժողովրդի պես զգալ, այդ նշանակում է համանման հոգեկան դրություններում զգալ այն, ինչ կզգա ժողովրդի մարդը... եթե դուք զգում եք այն. ինչ կզգար ժողովրդի մարդը, ապա դուք ժողովրդի պես եք և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են ձեր մանկով»[10]:

1899թ. սկսած «Դրոշակ»-ում սկսվեց հրատարակվել Հայ-գուսանի հայրենանվեր բանաստեղծությունները: Շարքը կարդալով, ընկալելով, ավելի ու ավելի ենք համաձայնվում Բեռնարդ Շոուի մտքին. «Ճշմարիտ բանաստեղծը զրուցում է ինքն իր հետ, իսկ աշխարհն ականջ է դնում»[11]: Իսահակյանը զրուցում է ինքն իր հետ՝ իր բազմաչարչար, սուրբ հայրենիքի հետ, հայրենիքի բնության, զավակի, ժա,մանակի հետ, իսկ աշխարհն ականջ է դնում՝ թեկուզ անտարբեր, թեև անհաղորդ: Շարքը դրամատիկ է և՝ ճշմարտությունն ասելու

հանդգնությամբ, և՝ տառապանքի ահավորությամբ, և՝ գաղափարի շեշտադրվածությամբ:

Իսահակյանը միանգամայն նորովի է մոտենում ազգային երևույթներին, դրանք դիտելով նոր տեսանկյունից: Նրա մոտ իսպառ բացակայում է ազգային խեղճությունը, քաղաքական անունակությունը, սնահավատությունը: Նա միանգամայն նոր մեկնակետ է ընտրում, որը ներհատուկ է պատմության խավար գիշերը հատող համարձակ, ոգեշունչ ուղևորին: Եվ նրա անձնազոհ հայդուկները, լինելով իր ժամանակի հերոսներ՝ իրենց գործողություններով հաստատում են բանաստեղծի գրած ամեն մի տող:

Նրա երգի ուժը գալիս է ազգային արմատներից, ժողովրդի ոգեղեն ակունքներից, և նա չէր կարող այլապես պատկերացնել իր երգը:

Չափազանց դժվարանում ենք պատկերացնել այն ոգեղեն լարումը, մտքի սևեռումը, հոգեկան ինքնահոշոտումը, մտամրցությունը, ինչը նախորդում է բանաստեղծական տողը թղթին հանձնելուն: Եվ բնական է, երբ նա հետագայում նայելով իր ժողովրդի անցած ուղուն, գրում է. «Կյանքի ու մահվան անհավասար կռվի մեջ բռնված ժողովրդին հայ գրականությունն է, որ ոգի էր ներշնչում, քաջալերում դիմադրելու, տոկալու, պահելու ազգային անաղարտությունը և ինքնուրույնությունը, պարզաբանելու իր իդեալները:

...Հայ ժողովրդի պայքարը հանուն իր ոգու, հայրենիքի և կուլտուրայի եղավ իր գրականության մշտավառ պաֆոսը, որ Թուր-Կեծակի պես անցավ բոլոր իր ստեղծագործությունների միջով, բոլոր ժամանակների միջով»[12]:

Հայաստանը, լինելով Իսահակյանի բանաստեղծական ներշնչման հիմնական աղբյուրը, կրկին ու կրկին վերակերտվում է բանաստեղծի կողմից՝ դառնալով ավելի խարհրդանշային, ավելի ոգեղեն ու նվիրական՝ և դրանով իսկ բանաստեղծ երգը կապելով հայ ավանդական գրականության արմատին. «Նրա բանաստեղծությունը գալիս է ոչ միայն մեր Գողթան երգերից ու բանահյուսությունից, այլև մեր մանրանկարչությունից ու խաչքարից, ժողովրդական մեղեդիներից»[13]:

Ժողովրդական ոգով ներկայացնելով ժողովրդին՝ նա ավելի ու ավելի հարստացրեց մեր քերթողական արվեստը նոր մոտիվներով, բացեց բանաստեղծական խոսքի զարգացման նոր ճանապարհներ՝ շեշտը փոխադրելով ժողովրդական ոգու անկոտրելիության և կերպարի առնականության վրա.« Իսահակյանը,-գրում է Վ. Բրյուսովը,-առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այդպիսի լուսավոր ու անմիջական տաղանդ այժմ ողջ Եվրոպայում չկա»[14]:

Ժամանակն է «ականջ դնել» Իսահակյանի «Հայդուկի երգերից» շարքին, որը դյուցազներգություն է, որը ամբողջովին վերակազմավորում է ընթերցողի հոգևոր աշխարհը, ուղղորդում մտածումները, ճանաչման նոր լույսով ողողում ժամանակի իրադարձությունները, առաջ քաշում նոր հարցադրումներ ու մտո-

րումներ: Ինչպես Լուի Արագոնն է բնորոշել նրա «պոեզիայի լույսի վառ ճաճանչը» ասես թե շողշողում է Սասունից, Մուշից, Տարոնից ու շեփորահարում նոր մարտերի արշալույս:

Ֆիդայական շարժումը հանդիսացավ հայ ազգային ազատագրական պայքարի առավել էպիկական և դյուցազնական մասը՝ իր մեջ արտացոլելով հայ ժողովրդի դարավոր հղձերն ու երազանքները. նոր, առավել ժամանակահունչ ձևով ներկայացրեց ազգային պատմաքաղաքական նկրտումներն ու հասարակական ներքին խմորումները: Դա ժողովրդի համընդհանուր քաղաքական զարթոնքի արգասիքն է, որը ցավոք չվերածվեց համաժողովրդական շարժման, այլ մնաց տեղայնացված հեղափոխական ընդվզումների մակարդակի՝ ընդհուպ ֆիդայական երկու հակակարծիքի գոյավորմանը՝ անդրանիկյան և հրայրյան: Սակայն, որքան էլ այդ կարծիքները լինեին տարաբնույթ, պայքարի ոգին կարողացավ զերծ մնալ ապականությունից: Եվ այդ ոգու երգն է, որ երգեց Իսահակյանը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայկ Ղազարյան-«Արևմտահայությունը ցաղանպանության նախօրյակին», Երևան, 2001թ., էջ 515
2. Հրաչիկ Սիմոնյան-«Անդրանիկի ժամանակը», Երևան, 1996թ.,էջ 81
3. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 316
4. Հրաչիկ Սիմոնյան-նույն տեղը, էջ 82
5. «Յեղափոխական երգարան», Գ. տպագրություն, Բեյրութ, 1988, էջ 182
6. Հրաչիկ Սիմոնյան-նույն տեղը, էջ 93
7. «Յեղափոխական երգարան»-նույն տեղը, էջ 12
8. «Յեղափոխական երգարան»-նույն տեղը, էջ 12
9. Հակոբ Շահբազյան «Քուրդ-հայ պատմություն»,Կ. Պոլիս, 1911, էջ 169
10. Մուրճ, Թիֆլիս, 1898, N6
11. «Պարույր Սևակ», «Հայաստան» հրատ., 1974, հ. 5, էջ 231
12. «Գրականություն», 1992, «Լույս» հրատ., էջ 3
13. Վ. Հակոբյան «20-րդ դարի հայ քնարերգության զարգացման միտումները», Ստեփանակերտ, 1998, էջ 30
14. «Գրականություն», Երևան, «Լույս» 1992թ., էջ 116